



Լեռնիդ Ենգիբարյան

Տասնինը տարեկան աղջկան

Տասնինը տարեկան ես:

Դու խաղում ես պինգ-պոնգ, գնում ես բար ընկերներիդ հետ եւ ճոճում ես ոտքերդ՝ նստած բարձր աթոռակին:

Դու տասնինը տարեկան ես:

Տասնինը տարի առաջ ես տարա առաջին մեծ հաղթանակս ղինգում եւ ծիծաղեցի բոլոր նրանց երեսին, ովքեր տխուր ինձ ասում էին . «Առաջին հաղթանակը նաեւ առաջին քայլն է դեպի պարտություն»:

Տասնինը տարեկան ես, եւ գրեթե նույն այդ տարիքին է տղան, ում հետ ես վաղը ղինգ եմ դուրս գալու: Նա հիմա քո կողքին է, իսկ դու ինձնից հեռու՝-հեռու՝ ես . .

Տասնինը տարի երկարությամբ հսկայական մի սանդուղք է բաժանում մեզ, հարյուրավոր աստիճանավանդակներ՝ ղինգեր, որոնց վրա ես ամեն անգամ նորից ու նորից նվաճում էի վեր բարձրանալու իրավունքս եւ ահա՝ բարձրացել եմ:

Քեզ դուր է գալիս թեք ուսերով ինքնավստահ այդ տղան՝ հոշակավոր Ն-ի գլխավոր մրցակիցը: Ես եմ այդ Ն-ն:

Իսկ ես կցանկանայի ցատկել բոլոր անդունդների եւ աստիճանների վրայով, խաղալ քեզ հետ պինգ-պոնգ եւ հիանալ քո ոտքերով, երբ դու ճոճում ես դրանք բարում՝ նստած բարձր աթոռակին:

Միթե չես հասկանում, որ ես չեմ գգում այդ անիծյալ տարբերությունը, չես հասկանում, որ ես տասնինը տարի՝ առաջին հաղթանակի օրվանից սկսած, սպասել եմ քեզ . . . Ոչ, դու չես հասկանում եւ չես տեսնում ինձ . դու տասնինը տարեկան ես:

Վերջ: Արդեն ուշ է, պետք է գնամ . վաղը մարտի եմ: Եւ ես կհաղթեմ,
անպայման կհաղթեմ, չէ որ այդպես անհույս արդեն պարտվել եմ: